



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է «Երևանի Միիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2019 թվականի մարտի 27-ի 19-02-04-15 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հասարակայնության հետ կապերի բաժինը «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Հասարակայնության հետ կապերի բաժինն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է «Հիմնադրամների մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի 1407-Ն որոշմամբ հաստատված Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի Հոգաբարձուների խորհրդի որոշումներով, Գիտական խորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով, սույն կանոնակարգով, այլ իրավական ակտերով:

II. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Հասարակայնության հետ կապերի բաժնի առջև դրված հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝
 - 1) Համալսարանի տեղեկատվական քաղաքականության կազմակերպումը և իրականացումը.

- 2) Համալսարանի կրթական, գիտական, կլինիկական գործունեության, Համալսարանի ստորաբաժանումների, հիվանդանոցային համալիրների, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների աշխատանքի և գործունեության մասին հասարակության իրազեկումը.
- 3) ռեկտորի, ինչպես նաև Համալսարանի այլ պաշտոնատար անձանց՝ զանգվածային լրատվական միջոցների հետ համագործակցության ապահովումը.

III. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հասարակայնության հետ կապերի բաժինն իր գործունեության նպատակին և խնդիրներին համապատասխան ունի հետևյալ գործառույթները՝

1) Համալսարանի ռեկտորի և պաշտոնատար այլ անձանց մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպագրույցների կազմակերպումը, Համալսարանի գործունեությանն առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ հայտարարությունների պատրաստումն ու հրապարակումը.

2) մամուլի հաղորդագրությունների պատրաստումը և տարածումը, իր իրավասության շրջանակում պարզաբանումներով հանդես գալը.

3) Համալսարանի ռեկտորին և անհրաժեշտության դեպքում Համալսարանի պաշտոնատար այլ անձանց, զանգվածային լրատվական միջոցներում տեղ գտած, առողջապահության ոլորտի կրթությանը առնչվող նյութերի մասին ծանուցումը, անհրաժեշտության դեպքում՝ դրանց օպերատիվ արձագանքի ապահովումը.

4) զանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանքային հանդիպումների կազմակերպումը, այդ թվում՝ Համալսարանի ռեկտորի և պաշտոնատար այլ անձանց մասնակցությամբ.

5) Համալսարանի գործունեությունն առավել ամբողջական և պատշաճ լուսաբանելու համար կառուցվածքային ստորաբաժանումներից, ներառյալ համալսարանական հիվանդանոցային համալիրներից, անհրաժեշտ տեղեկատվության և համապատասխան նյութերի ձեռքբերումը, այդ թվում՝ մշակվող իրավական ակտերի նախագծերի պատճենները, անհրաժեշտության դեպքում՝ դրանց լուսաբանումը և (կամ) շահագրգիռ կողմերի, մասնագետների մասնակցությամբ քննարկումների կազմակերպումը.

6) Համալսարանի գործունեության ոլորտներին վերաբերող էլեկտրոնային և տպագիր զանգվածային լրատվական միջոցների նյութերի ամփոփումը, վերլուծությունը և արխիվացումը.

7) լուսաբանման ենթակա, Համալսարանում անցկացվող աշխատանքային հանդիպումներին, խորհրդակցություններին, նիստերին, քննարկումներին և միջոցառումներին մասնակցությունը.

8) Համալսարանի պաշտոնական՝ <http://www.ysmu.am> կայքէջի, ինչպես նաև Համալսարանի և դրա որոշ ստորաբաժանումների, այդ թվում հիվանդանոցային համալիրների սոցիալական ցանցերում էջերի վարումն ու սպասարկումը.

9) իր առջև դրված խնդիրները պատշաճ իրականացնելու համար Համալսարանի և այլ կրթական հաստատությունների, գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը.

10) Համալսարանի իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

IV. ՀԱՍԱՐԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատանքները կազմակերպում է համալսարանի ռեկտորը:

6. Հասարակայնության հետ բաժինը բաղկացած է բաժնի պետից և մասնագետներից (այսուհետ՝ նաև աշխատողներ):

7. Հասարակայնության հետ կապերի բաժնի պետը և աշխատողները նշանակվում են Համալսարանի ռեկտորի հրամանով՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Հասարակայնության հետ կապերի բաժնի պետի և մասնագետների պաշտոնների նկարագրերը սահմանվում են Համալսարանի իրավական ակտերով:

9. Հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատողները ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով ռեկտորի կողմից մրցութային կարգով կամ առանց մրցույթի նշանակված աշխատողներ են:

10. Հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատողների հետ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ:

11. Հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատողները՝

1) իրականացնում են բաժնի գործունեության նպատակից և խնդիրներից բխող և իրենց պաշտոնների նկարագրերով սահմանված գործառույթներ.

2) կատարում են ռեկտորի, աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները.

3) իրականացնում են Համալսարանի իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

12. Հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատողները պարտավոր են ենթարկվել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը, Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, այլ իրավական ակտերի պահանջները:

13. Համալսարանն իրավասու է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության համաձայն իրականացնել աշխատողների ատեստավորում՝ աշխատողների մասնագիտական գիտելիքների, հմտությունների և աշխատանքային

ունակությունների համապատասխանությունը որոշելու համար: Աշխատողների ատեստավորումն իրականացվում է փաստաթղթային կամ թեստավորման կամ հարցազրույցի միջոցով:

V. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

14. Հասարակյնության հետ կապերի բաժնի աշխատանքները համակարգում է աշխատակազմի ղեկավարը:

15. Բաժինն անմիջականորեն ղեկավարում է պետը, ով՝

1) ղեկավարում, պլանավորում, կազմակերպում է բաժնի գործունեությունը.

2) հանձնարարություններ է տալիս բաժնի աշխատողներին և հսկողություն է իրականացնում նրանց գործունեության նկատմամբ.

3) ներկայացնում է բաժինը Համալսարանի ներկայացուցչական և կառավարման մարմիններում, այլ հաստատություններում, գերատեսչություններում, տեղական և միջազգային կազմակերպություններում.

4) իրականացնում է պաշտոնի նկարագրով սահմանված այլ պարտականություններ:

16. Ընդհանուր բաժնի պետի բացակայության դեպքում նրա իրավասությունները ժամանակավորապես իրականացնում է աշխատողներից մեկը՝ ռեկտորի հրամանով:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17. Սույն կանոնակարգը, դրա փոփոխությունները և լրացումներն ընդունվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

18. Հասարակայնության հետ կապերի բաժնի գործունեությունը կարող է դադարեցվել, Բաժինը կարող է վերակազմակերպվել, ինչպես նաև դրա գործառույթները կարող են լրացվել կամ նվազեցվել ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի իրավական ակտերով սահմանված կարգ